ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԷՍ-2019/05, 17.01.2019թ.

Բողոք բերող անձ՝ «ՓԱՅԼՔ» ՍՊԸ

Պատվիրատու ՀՀ ԿԱ ՊԵԿ

Ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցում

Գնման առարկա՝ Մաքրման ծառայությունների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝

Դադարեցնել «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.01.2018թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ «ՓԱՅԼՔ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու

օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Բողոք բերող՝ «ՓԱՅԼՔ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Տաշիր, Գրիբոյեդովի 14,

Հեռ. 098 98-32-68, Էլփոստ՝ marine marine.1964@mail.ru

Պատվիրատու՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Խորենացու 3/7

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ԿԱ ՊԵԿ կարիքների համար մաքրման ծառայությունների

Մատուցման նպատակով հայտարարված «ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-18/3»

ծածկագրով գնանշման հարցում

Բողոք

Բողոքի նախապատմությունը, փաստերը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կարիքների համար կազմակերպվել է «ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ Ընթացակարգ), որին 27.12.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՓԱՅԼՔ» ՍՊԸ-ն և ճանաչվել է 1-ին տեղ գրաված մասնակից.

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ առաջին տեղ գրաված մասնակցի ՀՀ պետական բյուջեն նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ.

Ի պատասխան վերոնշված հարցման՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրվել է եզրակացություն, համաձայն որի՝ «ՓԱՅԼՔ» ՍՊԸ-ն Հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 27.12.2018թ., ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված չեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն՝ 75,000 ՀՀ դրամ.

Այնուհետև գնահատող հանձնաժողովի կողմից «ՓԱՅԼՔ» ՍՊԸ-ի ներկայացված հայտը մերժվել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից եկամուտների գծով օրենքով նախատեսված չեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ ունենալու հիմքով.

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

ՍՏԱՑՎԱԾ է
ՍԵՂՄԱԳՐԻՐ
N 1524-19
«17» 01 2019թ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրմամբ՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք ուզում են ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող ենթակաների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև 1 տոկոսը, բայց ոչ ավելի, քան 50.000 ՀՀ դրամի գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության համաձայն «ՓԱՅԼՔ» ՍՊԸ-ն 27.12.2018թ.-ի դրությամբ /հայտ ներկայացնելու օր/ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 75.000 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Հայտնում ենք, որ «ՓԱՅԼՔ» ՍՊԸ-ի մոտ հայտ ներկայացնելու օրվա դրությամբ առկա ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարման գծով:

Սակայն, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի «ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով կազմակերպված ընթացակարգի շրջանակներում բացահայտվել է, որ «ՓԱՅԼՔ» ՍՊԸ-ն ունի հարկային մարմինների կողմից վերահսկվող ենթակաների գծով պարտավորություն՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարի գծով (նման պարտավորության առկայության փաստը մինչ այդ երբևիցե չի ներկայացվել ՊԵԿ-ի կողմից):

«Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի համաձայն՝ «ՓԱՅԼՔ» ՍՊԸ-ն 27.12.2018թ. դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող ենթակաների գծով ժամկետանց պարտավորություններ չունի: Եվ պետք է նշել, որ ՍՊԸ-ի միասնական հաշվի պատկերում արտացոլված չէ դրոշմանիշների վճարի վերաբերյալ որևէ տեղեկատվություն: և Ընկերությունը հայտը ներկայացրել է՝ հիմք ընդունելով «Հարկ վճարողի անձնական հաշիվ քարտի» տվյալները: Բան որի՝ ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 27.12.2018թ. ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող ենթակաների գծով պարտավորություններ չունի: Միևնույն ժամանակ, «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքում վկայակոչված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի դեպքում 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանը:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների դեմ կապված բողոքներ բնող անձին

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

Դադարեցնել «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.01.2019թ. նոտի թիվ 3 առձանագրությամբ «ՓԱՅԼՔ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Սոդիր՝ 4 թերթ:

Հաստատվել

«ՓՅԲԻ ՔՄԸ» ՍՊԸ խորհրդի՝ Հ. Խաչատրյան

17.01.2019 թ.